



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«ՕԶ» հրախցիկ 2023թ.

### ՀՐԱՄԱՆ N 2-2h

«ՎԻԶ ԷՅՐ ՀԱՆԳՐԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մայիսի 19-ի N 245-Ա հրամանը և «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերության 2023 թվականի հունվարի 9-ի հայտը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով՝ 2023 թվականի հունվարի 13-ից մինչև 2023 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մայիսի 19-ի N 245-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում

Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով իրականացվող հավելյալ չվերթներ, որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մայիսի 19-ի N 245-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

1/9/2023

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 001/2023  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԱՌԵԿՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ

PERMISSION 001/2023  
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR  
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Վիզ Էյր Հանգրի» ՍՊԸ "Wizz Air Hungary" LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239)
Հաճախականությունը Frequency	շաբաթական 2 չվերթ 2 flights per week
Երթուղին Air route	Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ Larnaca/LCLK/-Yerevan/UDYZ/-Larnaca/LCLK/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	13/01/2023 մինչև 24/03/2023 13/01/2023 till 24/03/2023

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ  
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐԱՅՆ  
CHAIR OF CIVIL  
AVIATION COMMITTEE  
MIHRAN KHACHATRYAN

1/9/2023



09.01.2023  
(տալու ամսաթիվը)  
(date of issue)